12004

241

# ՄԵՂՔՆ
# ԽԱՂԱՆԵՍԼՈՅ
# ԲԱՆՁԻ։

Թարգման-թէ-ն։

Ի հայրապետութեան Տն ՅՈՎ-ՀԱՆՆՈՒ Կարբեցւոյ սրբազնասուրբ Կաթուղի-կոսի ամենայն Հայոց։

Հրամանաւ Տեառն ԲԱՂՏԱ-ՍԱՐԱՅ իշխանազնի Ջալա-լեան սրբազան Արքեպիսկո-պոսի և մետրապոլտի Հայ-ոց Համայն Աղուանից։

Ի ՇՈՒՇԻ
Յամի Տեառն 1833

Այս ի՞նչ զարմանալի աշխարհք է որ նորա մէջն մենք կենումենք։ Լուսոյ իշխանն և խաւարի իշխանըն. բարի մարդիքն և չար մարդիքըն. սրբութիւնն և մեղքն՝ էդ ամէնին ծաղր անելոյ բան են շինում և ընտրվում։ Բայց շատ վախենալի և վնաս տուօղ յիմարութիւն է՝ էնպէսի բաներով ծաղր անելըն, որ շատ ահաւոր և ծանր են ինչու որ՝ սաղօմոնն սովորցնումէ. Թէ յիմար են նորանք՝ որ մեղքով ծաղր են անում։ (Առակ. ԺԴ. 9։) Այս տեղ երեխաներ ենք տեսնում որ առաջ անիրաւութիւն են գործում, և յետոյ ծաղր են անում նորանով. վա՜յ, որ շատ անգամ էլ անօրէն ծնողքն սիրտ են տալիս նորանց էնպէս ծաղր անելոյ համար։ Ա՛հ էնտեղ գինամոլ և հարբած մարդըն կանգնած տեսնու-

մենք, որ իրան հարբեցողութեան համար պարծենումէ, և անպատւակն իրան շատակերութեան համար, և խաղամոլն իրան արհեստի և խաբէութեան շահին համար։ Նոյնպէս շատ մարդիք կան, որ իրանց կեանքի ամէն օրերումն հենց իրանց ամօթովն են պարծենում։

Շատ մարդիքն շատ ուրախանումեն, երբ որ արդարների վարքերումն մին սխալմունք են տեսնում։ Նպա հաւատացեալ քրիստոնեանքներին ինչպէսի մարդիք պիտի լինին ամէն սուրբ վարքով, և աստուածպաշտութեանով, որ հակառակօղների սուտ պատճառանքներըն կտրեն, և յիմար մարդկանց անխելքութիւնըն պապանձացնեն։ Սիրելի կարդացօղ՝ կըլինի՞ որ դու էլ փորձվիս որ ծիծաղելով կամ թեթևամտութեան նըշանով, և կամ մին ուրիշ կերպով սիրտ տաս էնպէսի բան անելու՝ որ նորան կարօղ չես քո սրտումըդ հաւանիլ։ Նպա աղաչումենք քեզ՝ որ լաւ միտքդ աւնես էս մը-

տանջմունքներըս. որ էստեղ քո առաջեդ կրդնենք.

## Ա.

Ամէն ով որ մեղքումն ծիծաղումէ, նա ծաղր է անում; դեռ քանի որ աստուած բարկանումէ։ Աստուած ամէն օր բարկանումէ չար մարդկանց վերայ։ (Սաղմ. Է. 11։) Էն ինչ է, որ նորա բարկութիւնըն վէր է կացնում։ Էն ինչ է, որ նորանով նորա հոգին տանջվումէ և չարչարվում։ Էն ինչ է որ վրէժ խնդրութեան սուրըն կախել է տալիս մեղաւոր մարդկանց գլխի վերայ։ Ականջ դիր ով խօսքին. և իմաց թէ աստուծոյ բարկութիւնն երկնքից կը յայտնվի մարդկանց ամէն ամբարշտութեան և անիրաւութեան վերայ։ (Հռոմ. Ա. 18։) Ա՛ եթէ հենց մին երկրաւոր թագաւորի բարկութիւնն մին առիւծի գուալույն նման է, ապա մեծ աստուծոյ բարկութիւնն քանի՞ ահաւոր պիտի լինի։

## Բ.

Նմէն ով որ թեթևամտութենով մեղքումն ծաղր է անում նա բոլոր մարդկային խեղճութենումն է ծաղր անում։ Մե՛նք ապրումենք արտասունքի ձորի մէջն. որտեղ որ բանտեր և հիւանդներրի և ուրիշ անթիւ ցաւերի տեղերանք կան և շատ զօրութենով էն երևելի Ճշմարտութիւնըն ցոյց են տալիս մեզ՝ թէ մարդոյ խեղճութիւնն և ողորմելութիւնն մեծ է իրան վերայ։ (Ժողովող. Ը. 6.) Նոյց վայ. էն շատ ուրախ և անաւակ ամբարտաւաններըն, որ նորանցով իշխանութիւն և աւատութիւն են պատում. նորանք որ իրանց անհագ կեանքըն՝ փոփոխելի անաւակ և անցաւոր ուրախութենով, և էլ շատ անողորմ անաւաքութենով են մնխում և անցկացնում. վայ. քանի քիչ են միտք անում իրանց ուրախ ընկերութիւններրի մէջն. թէ հենց իրանց ծաղր անելոյ ժամանակումն անհամար մարդիկք մահի ցաւերըն և

ես կեանքիս ամէն կերպ նեղութիւն-
ներըն քաշումէ։

## Գ.

Ամէն ո՛վ որ մեղքով ծիծաղումէ, նա մահուան է ծիծաղում։ Պատճառըն որ՝ մեղքն աշխարհք մտաւ, և ապա մահն. մեղքի ետևէն եկաւ։ (Հռօմ. Ե. 12։) Այս մահն. էս աշխարհքիս գողգոթա սարին նման, իբր գլուխ կտրելու տեղ է շինել. և գլուխ կտրելու տեղն իսկի յարմար տեղ չէ, որ աշխարհական և մարմնաւոր ուրախութիւն անես նորանում։

Եթէ ամէն. մեռելների ոսկորները մին. շատ լայն և բարձր կլտուկ հաւաքվէին, և ապա մին մարդ հարցընէր՝ ինչպէս կէսուն. թէ էս ամէնը ով սպանեց. (Ղ. Թագ. Ժ. 9։) Պատասխանն իսպառ պէտք էր էն լինի, թէ սորանց ամէնին մեղքն սպանեց։

Մահն էս աշխարհքիս և էն յաւիտենական աշխարհքին միջումն կանգնած է՝ իրան կզակըն բացարած

և էսքան նեղ կարմունջիս վերայ կանգնումէ, որ էլ ոչ ով չի կարողանում անց կենալ, բայց պէտք է թալանի պէս նորա ձեռքն ընկնի։

## Դ.

Ամէն մարդ մեղքումը ծիծաղումէ՝ հենց էն ժամանակն է ծիծաղում, երբ որ պէտք էր նորան սուգ անել. Մի թէ կարելի է որ մին մարդ իրան հիւանդութենումը խաղ անէ։

Անկարելի է։ Ապա մեղքն շատ մեծ հիւանդութիւն է և էլ աղտ-տօղ և մահաբեր բան է որ հոգին և մարմինըն սպանումէ. Թէ դաղաա-դու՛ դեղն և մահլամն այսինքն Քրիստոսի արիւնն, շուտով չըգործածվի բժշկելու համար։ Մեղքն պատժապարտութիւն և յաւիտենական ամօթ է բերում մարդու վերայ։ Ապա եթէ մարդն ծիծաղէ իրան մեղքերումն, նա հենց էն խաբէութենումն է ծիծաղում, որ նորանով իրան անձըն խաբեց։ Նա ոչ մինակ յիմարութենով, բայց էլ չա-

րութե՛նով է վարվո՛ւմ. Ինչո՛ւ որ հե՛նց իրա՛նց անձի՛ն յիմարութենովն ծիծաղելի՛, յիմար և անխե՛լք մարդը գործն է։

Ն.

Ամե՛ն ով որ մեղքումն ծիծաղում է, նա դժոխքի տանջա՛նքներումն է ծիծաղում։ Պատճառն որ մեղքն բաց արա՛ծ է՛ն ահաւո՛ր խոր անդու՛նդը՛ն։ մեղքն ծնա՛ծ է՛ն որդը՛ն, որ եակի մին ժամանակ չի մեռնիլ։ Մեղքն վառեց է՛ն կրակի բոցը՛ն որ եակի մին ժամանակ չի անցնիլ։ Մեղքն տանում է մարդկանց էն լաց լինելու և սուգ անելու և ատամները՛ն կրճտացնելու տեղը՛ն. որտեղ որ յաւիտեան պիտի մնան։

Ո՛վ անհոգ և անմիտ մեղաւոր. մի թէ հե՞շտ բա՛ն է կենդանի աստուծոյ ձեռքն ընկնիլ, նորա անէծքի ծանրութիւնը՛ն քաշել, և յաւիտենակա՛ն կրակի մէջ բնակվիլ։ Մի թէ յո՞յս կունենաս որ դժոխքի մէջ էլ մեղաւոր ուրախութիւն վայելես քո

ընկերներին հետ, ինտեղ որ նորանց տանջանքի ծուխն վէր է ելլում յաւիտեանս յաւիտենից։ Իս միտք արէ՛ք, դուք ամէնքդ որ աստուծոյն մոռանումէք. որ չըլլինի թէ նա ձեր միջիցն կորէ և ոչ ով չըկայ որ փրկէ ձեզ։ Ոտքներդ առէք էս, դեռ քանի որ նորա բարկութեան մեծ օրն չի եկել։ Միտք արէք ձեր ճանապարհներին համար, և ձեր ոտները դ յետ դարձրէք դէպի նորա վկայութիւններին։ Պատճառն որ էդ վկայութիւններումդ մին փրկիչ է յայտնուած որ գտնէք նորան. և նորա անունն Յիսուս է։ Նա՛ հիմիկ է ընդունելի ժամանակն, ա՛հա հիմիկ է փրկութեան օրն։ Տէր Յիսուսին Քրիստոսին հաւատա՛, և կապրիս։

## Օ.

Ամէն ով որ մեղքով ծիծաղումէ, նա Յիսուսի յաւերոմն և չարչարանքներումն է ծիծաղում։ Ի՛ էս մտածմունքս ամէնից ահաւոր է՝ ե-

թէ Քրիստոսի անձին փառաւորու-
թեանն մօտիկ տանք։ Պատճառն որ՝
ստեղծուածներուն ծառը անելն էնքան
չար է. ապա ո՜յ Որդւոյն ծառը անելն
ուրքան անսահմանի չար և ահաւոր պի-
տի համարուի։ Ոչ ով իսկի մին ժա-
մանակ ինքյան անարգանքով չի չար-
չարուեցաւ, ինչպէս Յիսուսն չար-
չարուեցաւ։ Քարասիրտ և ռամիկ
մարդիկքն նորա երեսըն ծածկեցին
և սիլլայ տուին նորան, և ամենից
շատ անարգ կերպով խայտառակ ա-
րին նորան։ Էն ժամանակն թքեցին
նորա երեսին։ (Մտթ. Իգ. Ծ. 7։)
Հերոդէսն և նորա զինուորներն
Յիսուսին ծաղր արին և կռապաշտ
հռօմէական զինուորներն ծաղր ա-
նելոյ համար նորան մին ծիրանի շոր
հագցրին. և նորա ձեռքն մին ղամիշ
դրին՝ որ թագաւորական գաւազա-
նի տեղ ըլնի. և սրանով ծաղր ա-
րին. էն արդար իրաւունքըն, որ նա
իբր մարդկանց թագաւորն ունէր։
Նա՛ երբ որ նա խաչին վերայ վերա-
ցաւ՝ օհ ամենից սարսափելին է պատ

մեր. ծաղր արին նորան էին ահաւոր չարչարոցին՝ որ էլ նորանցով մեռած նա։ Օտար մարդիկն որ էնտեղով անց էին. կենում. իրանց գլխները շարժեցին և ասացին, թէ որ դու Աստուծոյ որդին ես. վէր եկ էդ խաչիցդ։ Քահանայապետները, կարդացօղները, և ծերերն շատ սաստիկ անարգանքով և ծաղր անելով ասացին. թէ ուրիշներն ազատեցրուց ինքըն իրան չի կարում ազատեցնել։ Էն հենց էն գողերն էլ որ նորա հետ խաչվեցան. ուրիշներին նման նախատինք դրին նորա վերայ։

Ո՜վ դու ով անտուակ մեղաւոր. մի թէ դո՞ւ էլ քո ձայնըդ նորանց ձայնին հետ կը խառնես, որ նորան նախատինք տաս. մի թէ դո՞ւ էլ կը համարձակվիս որ Յիսուսին խաչ անես, և թեթևամտութենով նորա ազօթքին, արտասունքներին, հառաչանքներին և արիւնախառն քրտունքին. և էն պաղի մէջ քաշած ամէն նեղութիւններին համար, և չո՜րանի դամնչով սաստիկ ծեծվելույն համար,

և փշից արած պսակ չարչարվելուն համար ծաղր անես։ Մի՛ համանակայ՝ որ նորա հետ գողգոթա սարին գնաս։ էնտեղ կանգնիր և տես․ լա՛ց միտք առ և քննիր։ Եթէ էսպէսի տեղի մէջ և էսպէսի ահաւոր բան տեսնելով կարենաս ծաղր անել․ ապա հրեշտակներն ի՞նչ պիտի ասեն։ Ո՞վ կասէ՝ եթէ աւելի տրտմութենով կամ թէ զարմանքով լցված կը լինի։ Նորանք սաստիկ ցանկութենով էին արիւնով լցված փայտի չորս կողմիցն պատեցան, որ էն զարմանալի բանըն տեսնեն, որ կենաց Տէրն մեռաւ։ Ո՜վ թէ որ կարելի լինէր որ նորանց աչքերին մին կաթ արտասունք թափէին, ապա տրտմելի զարմանքով էնտեղ թափած կըլինէին։

Արա համար՝ հիմիկ ծաղր անող մի լինիք․ որ չըլինի թէ ձեր կապանքներին հաստատվին և պնդանան։ (Եսայ․ Իը․ 22։) Եթէ Աստուած ապաշխարութիւն տայ քեզ կեանք ըստանալու համար․ ապա Քրիստոսի

համար սուգ և ողբ կանես, ինչպես որ մին մարդ սուգ է անում իրան միածին որդոյ համար, և տրտմութեն մէջ կը լինիս, ինչպես որ մին մարդ տրտմութեան մէջ է իրան առաջինեկ որդոյ մեռնելոյն համար։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библ.
ՀՍՍՀ
Им. А.
Ա. ՄՅԱՍ... ԱՆՎԱՆ